

ՀԱՐՑՆ ԻՐՈՔ ԿԱՐԵՎՈՐ Է

Նախ, կամենում եմ դրվատանքի խոսքեր ասել «Ավանգարդ» թերթի խմբագրության հասցեին, դիպլոմի և դիպլոմային աշխատանքների վերաբերյալ լայն ու գործարար խոսակցություն սկսելու կապակցությամբ: Կրկնելով լատինական հանրահայտ ասույթը, որ «կարծիքների բախումից է ծնվում ճշմարտությունը», հավելենք, որ «ՌԻսանդո-դիպլոմարտադրություն» հարցերը վաղուց արդեն հասունացել են մեզ մոտ (և թերևս, ոչ միայն մեզ մոտ), որովհետև այս բնագավառում ամեն ինչ չէ, որ իր բնականոն հունի մեջ է գտնվում, և ուրեմն, այս առիթով արծարծվող տեսակետները ամենևին էլ չեն կարող երկրորդական լինել:

Բայց դիպլոմային աշխատանքն ու դիպլոմի պաշտպանությունը, իրենով, անշուշտ, նշանավորելով ավարտող ուսանողի կյանքում մի նոր ու բարձր աստիճան, հանդիսանում են տարիներ տևած նրա ուսումնառության վերջնագիծը, այդ ուսումնառության հետևանքը: Իսկ այդ հետևանքը ճիշտ հասկանալու և, որ ավելի կարևոր է, նրա մասին ճիշտ դատողություններ անելու համար, անհրաժեշտ է մի քանի խոսք ասել պատճառի մասին, այսինքն՝ հենց այդ ուսումնառության մասին: Այստեղից է, որ սկսում է հասունանալ ապագայի դիպլոմը և ուսանելու տարիներին է, որ ձևավորվում, գիտական ու աշխատանքային որոշ մեթոդներ է մշակում իր համար հետագայի դիպլոմանտը: ՌԻստի սկսենք նախ այդ հարցերից:

Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված ուսանողի առաջին ծանոթությունն իր ընտրած մասնագիտության հետ, սկսվում է այն ժամանակվանից, երբ նրան հանձնարարում են տվյալ առարկաների գծով ամբողջ տարվա ընթացքում մշակելու համար սահմանված պարտադիր գրականությունը: Գրականություն, որի մի մասը (իսկ որոշ առարկաների դեպքում նաև գերակշիռ մասը) նա պետք է կարողանա յուրացնել դասախոսի օգնությամբ: Այստեղից էլ ծայր է առնում ամբողջ պատմությունը. Հավանորեն ձգտելով անել էլ՝ ավելին, հանձնարարել հնարավորինս շատ ու բազմակողմանի գրականություն, դասախոսները հանձնարարվելիք գրականության ցանկի մեջ մտցնում են չափածո և արձակ այնպիսի ստեղծագործություններ, որոնց հաղթահարելը բացարձակապես վեր է ուսանողների ուժերից: Բանասիրական ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողներին, օրինակ, «Հայ գրականություն» առարկայից հանձնարարվել է «Տաղք Մխիթարյան վարդապետաց» եռահատոր ժողովածուն և մանավանդ՝ Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազն» դյուցազներգությունը: Գործեր են սրանք, որոնք գրված են ամենախրթին ու ծանրամարս գրաբարով, իսկ «Հայկ դյուցազն» ստեղծագործությունն առհասարակ և, մանավանդ, նրա լեզուն այնպիսին է, որ առանց համապատասխան մասնագիտական պատրաստվածության անկարելի է հասկանալ: Շատ կուզենայի հարց տալ վերոհիշյալ գրքերը հանձնարարած դասախոսին. նա իրո՞ք հավատացած է, որ ուսանողները դրանք կարդալու են, կամ ավելի ճիշտ՝ նա հավատացած չէ, որ ուսանողները այդ գրականությունը միննույն է չեն կարդալու, ինչպիսի խստություններ էլ գործադրվելու լինեն:

Նույնը պետք է ասել նաև Թաղիադյանի վերաբերյալ, որի բոլոր գրաքար գործերը («Սոս և Սոնդիպի», «Վեպ Վարդգեսի», «Վեպ Վարսենկա»), որոնք դժվար հաղթահարելի են նույնիսկ մասնագետների համար, հանձնարարված է ընդամենը երկրորդ կուրսի մակարդակ ունեցող ուսանողներին: Էլ չենք խոսում Ռափայել Պատկանյանի մասին, որի՝ հանձնարարված պարտադիր գրականության ցանկում մտցված են նրա՝ Նոր-Նախիջևանի առավել քան խրթին բարբառով գրված պատմվածքներն անգամ: Բանը նույնիսկ հասնում է այնտեղ, որ «Արտասահմանյան գրականություն» առարկայի դասախոսը, հանձնարարելով ուսանողներին Շեքսպիրի սոնետները, պարտադրում էր կարդալ դրանք... բնագրով, այսինքն՝ հին անգլերենով:

Սրան սերտորեն միանում է նաև ուրիշ հարց. հանձնարարվող գրականության՝ ծավալային իմաստով մեծության և նրա համար նախատեսված ժամանակի փոքրության անհամամասնությունը: Տարբեր առարկաների գծով մեկ տարվա համար ուսանողներին հանձնարարվող պարտադիր գրականությունը արդեն այնպիսի վիթխարի չափերի է հասնում, որ այն քիչ թե շատ խորությամբ մշակելու ու յուրացնելու համար մի տարին ամեննին չի կարող բավարար համարվել և հետևաբար ուսանողը պետք է սկսի ըստ իր ցանկության ու քմահաճույքի այն «կրճատել»: Եվ սա օրինաչափություն է մեր գրեթե բոլոր բուհերում:

Չմոռանանք նաև հարցի, եթե այսպես կարելի է ասել, հոգեկան-հոգեբանական կողմը: Առաջին կուրսի ուսանողներին «Հայ ժողովրդական բանահյուսություն» առարկայից հանձնարարվել է կարդալ մեր ժողովրդական հեքիաթները և պարտադրվել, որ դրանք անպայման կարդացվեն իրենց բարբառներով: Իսկ սա նշանակում է, որ բավական է առաջին կուրսեցին ձեռնամուխ լինի, ասենք, Ղարաբաղի, Բիթլիսի, Վանի կամ Շատախի ծանրածանր բարբառներով տպագրված հեքիաթները կարդալուն, որպեսզի հիմնովին և վերջնականապես զգվի թե՛ այդ հեքիաթներից, և թե՛ այդ առարկայից առհասարակ: Իսկ ում համար է գաղտնիք, որ սովորելու ընթացքում սերը դեպի տվյալ առարկան, ամեննին էլ չի դասվում երկրորդական գործոնների շարքը:

Այսպիսի օրինակներ ես էլի կարող եմ բերել, և յուրաքանչյուր ոք, ով քիչ թե շատ մոտ է կանգնած «ուսանող-դիպլոմ-արտադրություն» բնագավառին, համանման օրինակներ բերելու տեսակետից, դժբախտաբար, որևէ պակասություն չի զգա: Եվ երևույթի բնականոն հետևանքն այն է լինում, որ ուսանողն աստիճանաբար ու հիմնավորապես մշակում է աշխատանքային իր «մեթոդը», այն է՝ կարդալ ու մշակել որքան կարելի է «հեշտ» գրականությունը, բավարարվել գերազանցապես դասախոսություններով՝ մի կողմ թողնելով օժանդակ աղբյուրները, ինչքան կարելի է «թեթևացնել» իր համար պաշտոնապես նախորոշված անելիքները, այսինքն՝ յուրացնել գիտելիքները ոչ թե ըստ էության, այլ սահել նրա մակերեսով:

Աշխատանքի այս ոճին արդեն վարժված և այն «յուրացրած» ուսանողը, ի վերջո, հասնում է այն երանելի օրվան, երբ պետք է դիպլոմային աշխատանք գրի, այսինքն՝ ցույց տա ինքնուրույն մտածողության մի նկատելի մակարդակ, մտքերը շարադրելու համապատասխան կուլտուրա, պատմա-հասարակական կամ գրական երևույթները վերլուծելու, դրանք ընդհանրացնելու ու

դրանցից համապատասխան եզրակացություններ անելու որոշակի կարողություն: Գիտելիքների ամբարման անհրաժեշտ խորությունն ու տարողությունը, և այս իմաստով՝ ներքին կուտակումները հիմնականում այնքան չեն, որ գոնե ընդհանուր սահմաններում կարողանան բավարարել այդ պահանջները: Մնում է դիմել դարձյալ նախկին «մեթոդին»։ Ընտրել որևէ «հեշտ» թեմա, որն ազատի զանազան մեծ ու փոքր գլխացավանքներից, շարադրել դիպլոմը՝ դարձյալ աշխատելով ըստ հնարավորին խուսափել սկզբունքային հարցերից կամ ինքնուրույն տեսակետներից, այսինքն՝ ուղեցույց ունենալով «անվնասությունը», և դրանով էլ ավարտել գործը: Բացառություններ, իհարկե, կան, բայց, դժբախտաբար, բացառությունները չեն, որ այստեղ օրինաչափ են, այնինչ պետք է լիներ ուղիղ հակառակը:

Դիպլոմային աշխատանքների գերակշիռ մասը գրվում է վերոհիշյալ սկզբունքից ելնելով ու հիշված տրամաբանությամբ, և, որ արդեն աններելի է, աշխատանքի այս ոճը ստեղծել է իր յուրօրինակ «տեսությունը»: Վերջերս «Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը» վերնագրով իր դիպլոմային աշխատանքի հետ ինձ մոտ էր եկել մի ուսանողուհի: Աշխատանքի ավելի քան ութսուն տոկոսը Ալիշանին նվիրված իմ գրքերի ազատ վերաշարադրությունն էր հանդիսանում: Երբ այս ամենը մատնացույց արեցի ուսանողուհուն և չթաքցրեցի իմ դժգոհությունը, նա անկեղծ զարմանքով նայեց ինձ և նույնքան զարմացած արտաբերեց. «Իսկ դուք ուրիշ ի՞նչ էինք կամենում: Ձեր գրքերը կարդացել եմ, մշակել և դրա հիման վրա շարադրել եմ դիպլոմս: Էլ ինչ անեի»:

Ուշադրություն դարձրեք, ուսանողուհին չի էլ մտածել այն մասին, որ իմ գրածները կարդալուց ու մշակելուց հետո նա պետք է ասի իր ինքնուրույն, իր սեփական խոսքը, այսինքն՝ ընդունի կամ չընդունի Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությանը վերաբերող իմ դրույթները, առաջ քաշի իր սկզբունքները, բանավիճի իմ այս կամ այն տեսակետի հետ: Նա պարզապես կարդացել է իմ գրածները, իր լեզվով շարադրել իմ մտքերը և այսքանը լրիվ բավարար է համարել դիպլոմային աշխատանքի համար:

Այս բոլորից հետո էլ ինչու ենք զարմանում, որ «Ավանգարդի» լեզվով ասած «դիպլոմը... պաշտպանությունից հետո հիմնականում գնում է համալրելու բուհական արխիվը»:

Կցանկանայինք ուշադրություն հրավիրել հետևյալի վրա: Մեզ մոտ լավ չի դրված դիպլոմային աշխատանքների հասարակական խթանման հարցը: Քառասունական թվականներին մեր երիտասարդական թերթերը (որոնց թվում նաև «Ավանգարդը») ունեին հատուկ բաժին՝ «Դիպլոմնիկի ամբիոն» խորագրով: Վատ գտնված այս վերնագրի ներքո, սակայն, գովասանքի արժանի նպատակ կար՝ հրատարակել ավարտող ուսանողի դիպլոմի որևէ ուշագրավ հատվածը, կամ որևէ հարցի մասին նրա զարգացրած տեսակետը կամ քննարկման առարկա դարձնել նրա առաջարկած նորամուծությունը: Դիպլոմի վրա աշխատողներին նույնիսկ պարտադրվում էր հանդես գալ այդ բաժիններում և, բնականաբար, դիպլոմի պաշտպանության ժամանակ տպագրված խոսք ունենալու հանգամանքը հաշվի էր առնվում: Վատ չէր լինի մեր երիտասարդական (և թերևս՝ ոչ միայն երիտասարդական) պարբերականներում վերականգնել այս ավանդույթը, որի՝ ըստ ամենայնի օգտակարության մասին երկրորդ կարծիք հազիվ թե լինի:

Վատ չէր լինի նաև բուհական զանազան ներքին պարբերականներում՝ «Երևանի համալսարան», «Պոլիտեխնիկ» և այլն, նույն այդ տրամաբանության թելադրությամբ, հաջորդաբար հրատարակել պաշտպանության ներկայացվող դիպլոմային աշխատանքներից ավել կամ պակաս մեծության հատվածներ, կամ պարբերականի էջերում կազմակերպել դիպլոմում առաջ քաշված որևէ տեսակետի քննարկումը:

Անշուշտ, հակամետ չենք կարծելու, որ սպառեցինք դիպլոմի պաշտպանության հետ առնչվող բոլոր հարցերը, կամ նույնիսկ՝ այդ հարցերի մի մասը: Կլինեն նորանոր տեսակետներ, կբարձրացվեն ուրիշ խնդիրներ, անկասկած կլինեն ոչ քիչ թվով ուշագրավ առաջարկություններ: Իսկ միթե հենց այդ չէ մեր բոլորի նպատակը...

ԱՎԱՆԳԱՐԴ, 1979, № 10